բարեպաշտութեանց թուլացեալ, և 'ի Յուլիանոսէ ուրացողէն երկնչեալ՝ զպիղծ պատկեր նորա 'ի տաճարին կանգնեցոյց։ Օ՞ր տեսեալ Յուսիկ՝ թոռն սրբոյն Գրիգորի, ընկէց յերկիր և խորտակեաց ոտիւք։ Եւ զայրացեալ Տիրան՝ սպան զՅուսիկ և զԴանիէլ քահանայ։ Սա շինեաց արքունիս 'ի Դվին։ Եւ Շապուհ կալաւ զՏիրան և կուրացոյց զաչս նորա, և անդ մեռաւ։

Արշակ՝ որդի Տիրանայ՝ ամս Լ։ Եւ վասն ապստամբից և անիրաւաց՝ քաղաք շինելոյն, և վասն սպանման Գնելայ՝ եղբօրորդւոյ իւրոյ՝ և առնլոյ զՓառանձեմ՝ կին նորա, անիծաւ 'ի սրբոյն Ներսիսէ։ Եւ եղև պատերազմ և Պարսիկք դերի կալան զնա, և ինքն զինքն սպան ի Խուժաստան։

Պապ՝ որդի Արշակայ՝ ամս Լ։ Ի սորա ուրուրս Հայք պատերազմեալ ընդ Պար-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան